Հավելված 1

Հաստատված է
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2004 թվականի հոկտեմբերի 26-ի թիվ 255 Ն որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԲԱՆԿԵՐԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՄՓՈՓ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ (ՔԱՄԵԼՍ) ՀԱՇՎԱՐԿՄԱՆ, ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳ

1. Սույն կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի ցուցանիշների ամփոփ գնահատականի (այսուհետ ՔԱՄԵԼՍ գնահատական) հաշվարկման, հաստատման և հրապարակման կարգ:
2. ՔԱՄԵԼՍ գնահատականը հաշվարկվում է որպես բանկի կապիտալի համարժեքության (Ք), ակտիվների որակի (Ա), կառավարման (Մ), եկամտաբերության (Ե), իրացվելիության (Լ) և շուկայական ռիսկի նկատմամբ զգայունության (Ս), (այսուհետ՝ ՔԱՄԵԼՍ-ի տարրեր), սույն կարգի համաձայն հաշվարկված գնահատականների միջին թվաբանական:
3. ՔԱՄԵԼՍ-ի յուրաքանչյուր տարրի (բացառությամբ՝ «Մ» տարրի) գնահատման համար հաշվարկվում են բաղադրիչ հարաբերակցություններ ՀՀ տարածքում գործող բանկերի կողմից, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2003 թվականի մարտի 25-ի թիվ 126 Ն որոշմամբ հաստատված «Բանկերի հաշվետվությունները, դրանց ներկայացումը և հրապարակումը» Կանոնակարգ 3-ով (այսուհետ՝ Կանոնակարգ 3) սահմանված, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի ներկայացվող հաշվետվությունների հիման վրա: Այդ հարաբերակցությունների հաշվարկը կատարվում է համաձայն սույն կարգի հավելված 1-ի: Յուրաքանչյուր հարաբերակցության հաշվարկի ընթացքում կիրառված ցուցանիշներ ճշգրտվում են համաձայն սույն կարգի հավելված 2-ի՝ հաշվի առնելով սահմանված համապատասխան ճշգրտող գործոնները և դրանց ամենահավանական քանակական ազդեցությունը հաշվարկվող բաղադրիչ հարաբերակցությունների վրա:

3.1. Բանկերի ՔԱՄԵԼՍ գնահատականները հաշվարկվում են յուրաքանչյուր ամիս՝ հեռակա վերահսկողության արդյունքում:

3.2. Բանկերի ՔԱՄԵԼՍ գնահատականը կարող է հաշվարկվել (ճշգրտվել) նաև բանկերում ստուգումների արդյունքներով:

4. ՔԱՄԵԼՍ-ի «Մ» տարրի գնահատականը հաշվարկվում է՝ համաձայն սույն կարգի հավելված 3-ի:
5. Ճշգրտված ցուցանիշների հիման վրա հաշվարկված հարաբերակցությունների, ինչպես նաև Մ տարրի գնահատումն իրականացվում է 1-5 բալային համակարգով, որտեղ լավագույն գնահատականը 5-ն է, իսկ վատագույնը՝ 1-ը:
6. Յուրաքանչյուր տարրի, համաձայն սույն կարգի հավելված 2-ի ճշգրտված բաղադրիչ հարաբերակցությունների գնահատականների միջին թվաբանականը հանդիսանում է տվյալ տարրի գնահատականը:

7. Եթե բանկի ընդհանուր կապիտալի միջին ամսական մեծությունը փոքր է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն ընդհանուր կապիտալի չափից, ապա «Ք» տարրի գնահատականը հավասար է 1-ի:
8. Եթե բանկի ընթացիկ ժամանակաշրջանի չբաշխված շահույթը բացասական մեծություն է, ապա «Ե» տարրի գնահատականը հավասար է 1-ի:
9. Եթե բանկի ընդհանուր կապիտալի միջին ամսական մեծությունը բացասական է, ապա «Ք», «Ա», «Ե», «Լ», «Ս» տարրերի այն բաղադրիչ հարաբերակցությունները, որոնց հաշվարկին մասնակցում է ընդհանուր կապիտալը, գնահատվում են 1 (մեկ):
10. Բանկերի ՔԱՄԵԼՍ գնահատականները հաստատվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի լիցենզավորման և վերահսկողության հանձնաժողովի կողմից:
11. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը բանկերի ՔԱՄԵԼՍ ամսական գնահատականները հաստատելուց հետո եռօրյա ժամկետում դրանք տրամադրում է բանկերին, ընդ որում յուրաքանչյուր բանկին իր անհատական ՔԱՄԵԼՍ գնահատականը: ՔԱՄԵԼՍ գնահատականը կարող է կազմվել նաև բանկերում ստուգումների արդյունքներով:

Հավելված 3
«Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի
ցուցանիշների ամփոփ գնահատականի (ՔԱՄԼԵՍ) հաշվարկման,
հաստատման և հրապարակման կարգի»

Մ-Կառավարում

Կառավարման գնահատականն արտացոլում է բանկի կառավարման մարմինների ունակությունը կառավարել բանկի ռիսկերը, բանկի ներքին ակտերի համարժեքությունն է և ներքին հսկողության համակարգերի արդյունավետությունը՝ բանկի գործունեության անընդհատությունն ապահովելու նպատակով:

«Մ» տարրի գնահատականը հաշվարկվում է սույն հավելվածում սահմանվող հարցերին տրվող բալերի հանրագումարի միջոցով: Ընդ որում, յուրաքանչյուր հարցին տրվում է «0», «1», «2», կամ «3» բալ: Ամենաբարձր գնահատականը «3»-ն է, իսկ ամենացածրը ՝ «0»-ը:

Բալային համակարգով գնահատելու ժամանակ վերահսկողը պետք է հաշվի առնի նաև այս կամ այն հարցի կարևորությունը: Օրինակ, եթե բանկն ամբողջությամբ բավարարում է որևէ հարցաղրման պահանջներին, սակայն այն մեծ կարևորություն չի ներկայացնում կոնկրետ բանկի «Մ» տարրի գնահատականի որոշման համար, ապա վերահսկողը կարող է հարցին տալ 3-ից պակաս բալ, դրանով իսկ ցույց տալով հարցի հարաբերականորեն պակաս կարևորությունը:

Կախված բալերի հանրագումարի մեծությունից՝ «Մ» տարրին տրվում են ներքոհիշյալ գնահատականները.

ա) Մ–ին տրվում է «5» գնահատական, միայն եթե, ներքոհիշյալ հարցերին տրվել են միայն «2» կամ «3» գնահատականներ: Ընդ որում, Մ–ին տրվում է «5» գնահատական, եթե բալերի հանրագումարը մեծ կամ հավասար է 81-ի:

բ) Մ –ին տրվում է «4» գնահատական, եթե բալերի հանրագումարը կազմում է 72-ից 80 միավոր:

գ) Մ –ին տրվում է «3» գնահատական, եթե բալերի հանրագումարը կազմում է 54-ից 71 միավոր:

դ) Մ –ին տրվում է «2» գնահատական, եթե բալերի հանրագումարը կազմում է 36-ից 53 միավոր:

ե) Մ –ին տրվում է «1» գնահատականը, եթե բալերի հանրագումարը փոքր է 36-ից:

N	Հարցադրումը	Բալեր՝ (0-ից 3 բալ):
1.	որքանո՞վ է բանկի կառուցվածքը համապատասխանում բանկի կողմից իրականացվող գործառնությունների առանձնահատկություններին:	
2.	գնահատել թե որքանո՞վ են բանկի խորհրդի անդամները և գործադիր մարմինը անկախ բանկի մասնակիցներից և/կամ խոշոր ավանդատուներից, (պետք է հաշվի առնել նաև արդյո՞ք արձանագրվել են ճնշումներ մասնակիցների կողմից խորհրդի անդամների կամ գործադիր մարմնի վրա):	
3.	որքանո՞վ է բանկի ղեկավարությունը ճանաչում բանկի իրական մասնակիցներին:	
4.	արդյո՞ք բանկում առկա է կառավարման տարբեր մարմինների (մասնավորապես՝ բանկի խորհուրդ, գործադիր տնօրեն և այլ) միջև իրավասությունների և պարտականությունների հստակ տարանջատում: *Գնահատականը կարող է լինել կամ «0» կամ «3»*	
5.	որքանո՞վ է բանկի խորհուրդը հետևում արտաքին աուդիտորների, ներքին աուդիտի կամ ԿԲ վերահսկողների կողմից ստացված դիտողությունների և առաջարկությունների իրականացմանը:	
6.	արդյո՞ք խորհուրդը ստանում է բավարար տեղեկատվություն բանկի գործադիր մարմինը վերահսկելու, ինչպես նաև ողջամիտ և արդյունավետ որոշումներ ընդունելու համար: *Գնահատականը կարող է լինել կամ «0» կամ «3»*	
7.	որքանո՞վ է բանկի կառավարման տեղեկատվական համակարգը ապահովում բանկի գործադիր ղեկավարությանը այն տեղեկատվությամբ, որն անհրաժեշտ է բանկի արդյունավետ կառավարման և բանկի աշխատակիցների գործողությունները հսկելու համար:	
8.	գնահատել բանկի ստորաբաժանումների միջև տեղեկատվության փոխանակման արդյունավետությունը (նաև բանկի գլխամասային գրասենյակի ու մասնաճյուղի միջև):	
9.	արդյո՞ք բանկի գործադիր ղեկավարների համար առաջնային է բանկի ֆինանսական գործունեության իրականացման հսկողությունը (անվտանգությունը), քան ֆինանսական գործունեության արդյունքները (այն է բանկը չի վտանգում իր ֆինանսական վիճակը կամ համբավը չափից ավելի ռիսկային գործառնություններ իրականացնելով): *Գնահատականը կարող է լինել կամ «0» կամ «3»*	
10.	գնահատել բանկի գործադիր ղեկավարների աշխատավարձերի և բանկի միջին աշխատավարձի մակարդակի միջև առկա տարբերությունը: *Գնահատել «0», եթե աշխատավարձերի մակարդակների միջև առկա տարբերությունը չափազանց մեծ է*	
11.	որքանո՞վ է ապակենտրոնացված բանկում որոշումների ընդունման գործընթացը՝ բանկի աշխատակիցների և տարբեր կառուցվածքային ստորաբաժանումների ֆունկցիաներին համապատասխան:	
12.	գնահատել որքանո՞վ են բանկի վարկավորման գործընթացի վերաբերյալ ներքին ակտերը և/կամ գրավոր քաղաքականությունները բավարարում վերջիններիս նկատմամբ ՀՀ ԿԲ իրավական ակտերով սահմանված պահանջներին, որքանո՞վ համարժեք են բանկի գործունեության առանձնահատկություններին ու ռիսկայնությանը, և որքանո՞վ է բանկը գործում վերընշված ակտերի և/կամ գրավոր քաղաքականությունների համաձայն:	

13.	գնահատել որքանո՞վ են բանկի ներդրումային (ներդրումներ արժեթղթերում) գործընթացի վերաբերյալ ներքին ակտերը և/կամ գրավոր քաղաքականությունները բավարարում վերջիններիս նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին, որքանո՞վ համարժեք են բանկի գործունեության առանձնահատկություններին ու ռիսկայնությանը, և որքանո՞վ է բանկը գործում վերընշված ակտերի և/կամ գրավոր քաղաքականությունների համաձայն:	
14.	գնահատել որքանո՞վ են բանկի ակտիվների և պասիվների (իրացվելիության) կառավարման վերաբերյալ ներքին ակտերը և/կամ գրավոր քաղաքականությունները բավարարում վերջիններիս նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին, որքանո՞վ համարժեք են բանկի գործունեության առանձնահատկություններին ու ռիսկայնությանը, և որքանո՞վ է բանկը գործում վերընշված ակտերի և/կամ գրավոր քաղաքականությունների համաձայն:	
15.	գնահատել որքանո՞վ են բանկի եկամտաբերության կառավարման վերաբերյալ ներքին ակտերը և/կամ գրավոր քաղաքականությունները բավարարում վերջիններիս նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին, որքանո՞վ համարժեք են բանկի գործունեության առանձնահատկություններին ու ռիսկայնությանը, և որքանո՞վ է բանկը գործում վերընշված ակտերի և/կամ գրավոր քաղաքականությունների համաձայն:	
16.	գնահատել որքանո՞վ են բանկի շուկայական ռիսկերի կառավարման վերաբերյալ ներքին ակտերը և/կամ գրավոր քաղաքականությունները բավարարում վերջիններիս նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին, որքանո՞վ համարժեք են բանկի գործունեության առանձնահատկություններին ու ռիսկայնությանը, և որքանո՞վ է բանկը գործում է վերընշված ակտերի և/կամ գրավոր քաղաքականությունների համաձայն:	
17.	գնահատել որքանո՞վ են բանկի անձնակազմի կառավարման վերաբերյալ ներքին ակտերը (նաև ուսուցողական ծրագրեր անձնակազմի համար) և/կամ գրավոր քաղաքականությունները բավարարում վերջիններիս նկատմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի իրավական ակտերով սահմանված պահանջներին, որքանո՞վ համարժեք են բանկի գործունեության առանձնահատկություններին ու ռիսկայնությանը, և որքանո՞վ է բանկը գործում է վերընշված ակտերի և/կամ գրավոր քաղաքականությունների համաձայն:	
18.	արդյո՞ք բանկում առկա են ղեկավարների մասնագիտական որակի բարձրացման և ղեկավարների նոր «սերնդի» պատրաստման ծրագրեր: *Գնահատականը կարող է լինել կամ «0» կամ «3»*	
19.	արդյո՞ք բանկի ղեկավարներն իրականացնում են ներքին ակտերի պահանջների պահպանման ուղղությամբ պատշաճ վերահսկողություն և որքանո՞վ է այն արդյունավետ:	
20.	գնահատել բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը, որքանո՞վ է այն բավարարում Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմաններին:	
21.	գնահատել բանկի ներքին աուդիտի արդյունավետությունը, արդյո՞ք բանկի ներքին աուդիտը վերահսկում է տարբեր մակարդակների ղեկավարների գործունեության համապատասխանությունը բանկում ընդունված քաղաքականություններին և ընթացակարգերին:	
22.	գնահատել բանկի աշխատակիցների, հատկապես միջին և բարձր օղակի ղեկավարների մասնագիտական պատրաստատվածությունը /կրթություն, մասնագիտական փորձ, դասընթացներ/:	

23.	գնահատել բանկի ղեկավար պաշտոններում ժամանակավոր պաշտոնակատարների քանակը, ժամանակավոր պաշտոնակատար աշխատելու տևողությունը, ժամանակավոր պաշտոնակատար լինելու պատճառները, բանկում ղեկավարների փոփոխման հաճախականությունը, բանկի ղեկավար պաշտոններում աշխատող անձանց կողմից որակավորման քննությունների վերահանձնման հաճախականությունը:	
24.	որքանո՞վ բանկի աշխատակիցների որակը և քանակը համապատասխանում են բանկի կողմից իրականացվող գործառնությունների ծավալին և բարդությանը:	
25.	գնահատել բանկի ռազմավարական ծրագիրը, դրա իրատեսականությունը, մասնավորապես, արդյո՞ք ռազմավարական ծրագրերով ծրագրավորված և բանկի փաստացի ցուցանիշները ընդհանուր առմամբ համադրելի են:	
26.	արդյո՞ք Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները և փաստաթղթերը ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից սահմանված ժամկետին և առանց սխալների: *Գնահատականը կարող է լինել կամ «0» կամ «3»*	
27.	գնահատել հաշվետու ժամանակաշրջանում բանկի կողմից թույլ տրված օրենքների և այլ իրավական ակտերի խախտումները: *Եթե հաշվետու ժամանակաշրջանում բանկը կատարել է ոչ ավել քան 2 խախտում, ապա տրվում է «3» գնահատական, 3-5 խախտում՝ «2», 6-10 խախտում՝ «1», 10-ից ավել խախտումների դեպքում՝ «0» գնահատական*	
28.	գնահատել բանկի կողմից իրականացվող մարկետինգային քաղաքականությունը արդյունավետությունը շուկայում բանկի դիրքն ուժեղացնելու առումով:	
29.	արդյո՞ք առկա են բանկի գործադիր ղեկավարների կողմից բանկի միջոցների օգտագործման և/կամ վարկերի ստացման փաստեր: *Գնահատականը կարող է լինել կամ «0» կամ «3»*	
30.	այս կետով պետք է սահմանվեն բանկի կառավարմանն առնչվող այն խնդիրները (կամ խնդիրը), որոնք չեն բացահայտվում սույն աղյուսակով, սակայն կարող են մեծ ազդեցություն գնահատելիս: *Խնդիրը պետք է մանրամասն նկարագրվի:*	
Ընդհամենը բալեր		
«Մ» տարրի գնահատականը		